ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«15» 10 2025թ.
No 012350

«ԱԼԴԱ ԻՆՎԵՍՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ԱԼԱԽՎԵՐԴՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 4 թղմ., 44, 30,
պատճենը՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 15, 35Ա տաղավար,
էլ. փոստի հասցե՝ aldainvest@mail.ru)

Հարգելի՛ պարոն Ալախվերդյան,

Կից ուղարկվում է Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2025 թվականի հոկտեմբերի 14-ի ««Ալդա Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02921/25 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 699-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «3» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

Սպառողների շահերի պաշտպանության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (214)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 13 նոյեմբերի 2025 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 699-Ա

«ԱԼԴԱ ԻՆՎԵՍՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-02921/25 ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը (նախկինում՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողով, այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2025 թվականի հոկտեմբերի 14-ի նիստում, քննարկելով «Ալդա Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) վերաբերյալ թիվ ՀԳ-02921/25 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի հուլիսի 7-ի թիվ 7819 գրությամբ (այսուհետ նաև՝ **Գրություն**) Ընկերությունից պահանջվել է 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում (այսուհետ նաև՝ **Դիտարկվող ժամանակահատված**) Ընկերության կողմից Ապրանքի ձեռք բերման փաստաթղթերի պատճենները.

2) Դիտարկվող ժամանակահատվածում Ընկերության կողմից Ապրանքի շրջանառության վերաբերյալ՝ համաձայն կից ներկայացվող Ձևանմուշի և կցելով հիմնավորող փաստաթղթեր.

3) Ընկերության կողմից «BOOB» ապրանքային նշանի օգտագործման իրավական հիմք հանդիսացած փաստաթղթերի (գրանցված ապրանքային նշան, թույլտվություն և այլն) պատճենները:

Ընկերությունը Գրությունը ստացել է 2025 թվականի հուլիսի 21-ին Ընկերության գործունեության՝ Արշակունյաց պող. 15, 35Ա տաղավար հասցեով, իսկ իրավաբանական՝ Դավթաշեն 4 թղմ., 44, 30 հասցեով 2025 թվականի օգոստոսի 9-ին վերադարձվել է «չի պահանջվել» նշումով:

Ընկերությունը պահանջված տեղեկատվությունը Հանձնաժողով չի ներկայացրել:

Հանձնաժողովը 2025 թվականի հուլիսի 15-ի ««Ալդա Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 461-Ա

որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 461-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-02921/25 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Վարույթը հարուցվել է «BOOB» բառի օգտագործման առնչությամբ Ընկերության վարքագծում շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Թիվ 461-Ա որոշումը ուղարկվել է Ընկերության իրավաբանական՝ ք. Երևան, Դավթաշեն 4 թղմ., 44, 30 հասցեով, որը վերադարձվել է «Չի պահանջվել» նշումով:

Թիվ 461-Ա որոշումը 2025 թվականի օգոստոսի 13-ին հրապարակվել է https://www.azdarar.am/ և Հանձնաժողովի պաշտոնական (http://competition.am) կայքերում, և այն համարվել է Ընկերությանը պատշաճ հանձնված 2025 թվականի օգոստոսի 17-ից:

Հանձնաժողովը 2025 թվականի օգոստոսի 12-ի ««Ալդա Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 533-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 533-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-03914/25 վարույթը (այսուհետ նաև՝ **թիվ ՀԳ-03914/25 վարույթ**):

Թիվ ՀԳ-03914/25 վարույթը հարուցվել է Ընկերության վարքագծում Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում տնտեսավարող սուբյեկտի պարտականության խախտման հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարողի 2025 թվականի օգոստոսի 14-ի թիվ 9522 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 9522 գրություն**) Ընկերությունը տեղեկացվել է, որ Հանձնաժողովի սպառողների շահերի պաշտպանության վարչությունը (այսուհետ նաև՝ **Պատասխանատու ստորաբաժանում**) Թիվ ՀԳ-03914/25 վարույթը եզրափակող վարչական ակտի նախագիծը նախատեսում է ներկայացնել Հանձնաժողովի քննարկմանը Ընկերության դիրքորոշում ներկայացնելու ժամկետի ավարտից հետո եռօրյա ժամկետում:

Թիվ 533-Ա որոշումը թիվ 9522 գրությանը կից ուղարկվել է Ընկերության իրավաբանական և գործունեության հասցեներով, որոնք համապատասխանաբար 2025 թվականի սեպտեմբերի 11-ին և 2025 թվականի օգոստոսի 25-ին վերադարձվել են «Չի պահանջվել» նշումով:

Թիվ 533-Ա որոշումը 2025 թվականի սեպտեմբերի 15-ին հրապարակվել է https://www.azdarar.am/ և Հանձնաժողովի պաշտոնական (http://competition.am) կայքերում, և այն համարվել է Ընկերությանը պատշաճ հանձնված 2025 թվականի սեպտեմբերի 18-ից:

Հանձնաժողովը 2025 թվականի հոկտեմբերի 7-ի ««Ալդա Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 694-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 694-Ա որոշում**) Ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց և տրվել է հանձնարարություն՝

1) անհապաղ Հանձնաժողովին տրամադրել Դիտարկվող ժամանակահատվածում Ընկերության կողմից «BOOB» ապրանքային նշանով աղբի տոպրակների ձեռքբերման փաստաթղթերի պատճենները.

2) անհապաղ Հանձնաժողովին տրամադրել Դիտարկվող ժամանակահատվածում Ընկերության կողմից «ԲՕՕԲ» ապրանքային նշանով աղբի տոպրակների շրջանառության վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն կից ներկայացված Ձևանմուշի և կցելով հիմնավորող փաստաթղթեր.

3) անհապաղ Հանձնաժողովին տրամադրել Ընկերության կողմից «ԲՕՕԲ» ապրանքային նշանի օգտագործման իրավական հիմք հանդիսացած փաստաթղթերի (գրանցված ապրանքային նշան, թույլտվություն և այլն) պատճենները:

Միևնույն ժամանակ՝ թիվ 694-Ա որոշմամբ նշվել է, որ նշված հանձնարարության կատարման համար անհրաժեշտ է առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օր:

Թիվ 694-Ա որոշմամբ տրված հանձնարարություններն Ընկերության կողմից դեռևս չեն կատարվել:

Հաշվի առնելով, որ Վարույթի ժամկետը լրանում է 2025 թվականի հոկտեմբերի 15-ին, իսկ թիվ 694-Ա որոշմամբ տրված հանձնարարությունների առնչությամբ տրամադրման ենթակա տեղեկատվությունը ստանալու և վերլուծելու, Ընկերության լսված լինելու հավելյալ հնարավորություն ապահովելու, անհրաժեշտության դեպքում այլ տեղեկատվություն ձեռք բերելու, ինչպես նաև Վարույթի շրջանակում գործի բազմակողմանի և լրիվ քննությանն ուղղված այլ գործողություններ կատարելու համար՝ Վարույթի իրականացման՝ Օրենքով սահմանված եռամսյա ժամկետը բավարար չէ՝ Հանձնաժողովի սպառողների շահերի պաշտպանության վարչությունը 2025 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 11521 զեկուցագրով առաջարկել է Վարույթի ժամկետը 2025 թվականի հոկտեմբերի 15-ից եռամսյա ժամկետով երկարաձգել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Վարույթի ժամկետն անհրաժեշտ է եռամսյա ժամկետով երկարաձգել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2025 թվականի հոկտեմբերի 15-ից եռամսյա ժամկետով երկարաձգել «Ալդա Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02921/25 վարույթի ժամկետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. հոկտեմբերի 14
Երևան